

## Ձեռնարկությունների Եվրոպական Ցանց Հայաստան



# ՏԵՂԵԿԱԹԵՐԹ #4

Ապրիլ 2017

Երևան, Հայաստան



# Բովանդակություն

Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ.....	3
Սննդի վերամշակում .....	3
Տեքստիլ արտադրություն .....	5
Շինարարություն .....	8
R&D .....	10
Տեղեկատվական տեխնոլոգիաներ.....	12
Կոսմետիկա.....	13
Դեղագործություն .....	14
Այլ ոլորտներ .....	15
Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ.	19
Եվրոպական նորություններ և միջոցառումներ.....	21

# Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ

Հայաստանյան ՓՄՁ-երի միջազգային գործարարության զարգացման և արտասահմանյան գործընկերների հետ կապեր հաստատելու նպատակով ՁԵՑ Հայաստանը ուշադրության է ներկայացնում գործարար համագործակցության հետևյալ առաջարկները.

## Մենդի վերամշակում



## Գործարար համագործակցության առաջարկներ

### *Ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ*

Ռումինական ընկերությունը, որը գործում է բնական սննդամթերքի և սուպերսննդի մեծածախ վաճառքի ոլորտում, փնտրում է գործընկերներ, ինչպես օրինակ մանրածախ ընկերություններ՝ տարածելու համար իր ապրանքները: Բնական սննդամթերքի տեսականին ներառում է՝ ընկույզ, դդմի սերմեր, արևածաղկի սերմեր, չրեր, կակաո, կակաոյի հատիկներ, կակաոյի յուղ, պերճածաղկի օշարակ, թխկու հյութ և այլն: Ընկերության արտադրանքի շուրջ 90 %-ը Բիո սերտիֆիկացում ունեն: Մասնավոր

պիտակով ծառայությունները ևս հասանելի են: Համագործակցությունը հնարավոր է տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո:

**Ծածկագիր. BORO20170220001**

***Պաշտետներ, պատրաստի կերակուրներ և պահածոյացված միս արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ***

Լեհական ընկերությունը, որը գործում է մսի և ձկնամթերքի մշակման ոլորտում, մասնագիտացած է պահածոյացված պաշտետների և նախաճաշի մսային պատրաստի կերակուրների արտադրության ոլորտում, փնտրում է դիստրիբյուտորներ՝ հաստատելու համար երկարատև համագործակցություն:

**Ծածկագիր. BOPL20150911001**

***Ընկերությունն իր մասնավոր պիտակով և մրցանակակիր շոկոլադե արտադրանքով փնտրում է դիստրիբյուտորներ***

Շվեդական ընկերությունը, որը զբաղվում է մասնավոր պիտակով շոկոլադե ապրանքների վաճառքով և մարքեթինգով, փնտրում է դիստրիբյուտորներ, որոնք գործում են սննդի ոլորտում և ունեն վաճառքի ցանց՝ մանրածախ և հատուկ վաճառքի կետեր, համագործակցում են հյուրանոցների/ռեստորանների հետ:

**Ծածկագիր. BOSE20160822003**

***Հրուշակեղեն արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ***

Այս ընկերությունը Ուկրաինայում հրուշակեղեն արտադրող առաջատար ընկերություններից է և ունի լայն տեսականի, որն իր մեջ ներառում է 100 տեսակ շոկոլադե և բաղադրյալ ծածկույթներ: Ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ Եվրոպայում:

**Ծածկագիր. BOUA20160126001**

## **Գործարար համագործակցության հարցումներ**

***Արոնիայի հատապտուղներ և հյութեր արտադրողը փնտրում է արոնիայից ստացվող այլ սննդամթերք***

Լեհական ՓՄՁ-ն, որը 3 տարվա փորձ ունի սննդամթերքի շուկայում, փնտրում է արոնիայից ստացվող սննդամթերքներ, օրինակ՝ շաքարապատված արոնիա, արոնիայի փոշի, չորացված արոնիա: Ընկերությունը փնտրում է գործընկերներ, որոնք կհամագործակցեն տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո:

**Ծածկագիր. BRPL20161010002**

***Մսնդամթերքի ոլորտում գործող ընկերությունն առաջարկում է տարածման ծառայություններ***

Ընկերությունը Լեհաստանի կենտրոնական տարածաշրջանից, որը ներկայացնում է մասնավոր հատվածը, գործում է շուկայում 1990 թ. -ից: Ընկերությունը տարածում է կրեմ, այծի կաթ, կովի կաթ, հունական յոգուրտ, ֆետա պանիր, սննդային հավելումներ, օրգանական սնունդ առևտրի և մանրածախ կետերի շրջանում: Ընկերությունը կտարածի սննդամթերք Իտալիայից, Հունաստանից, Իսպանիայից և այլ երկրներից:

Ծածկագիր. BRPL20161010003

***Սննդի և խմիչքների առևտրի միջնորդը փնտրում է օրգանական սննդամթերք***

Կատալոնյան (Իսպանիա) ընկերությունը, որը զբաղվում է սննդամթերքի և խմիչքների շուկայի հետազոտությամբ և գովազդային գործունեությամբ, առաջարկում է առևտրի միջնորդավորված ծառայություններ եվրոպական ընկերություններին, որոնք արտադրում են օրգանական և բիո ապրանքներ և ցանկանում են մուտք գործել իսպանական շուկա: Ընկերությունը ցանկանում է իր արտադրական պորտֆելը մեծացնել և փնտրում է առևտրային/տարածման համագործակցություն:

Ծածկագիր. BRES20161123001

***Մրգերի ներմուծողը և դիստրիբյուտորը փնտրում է համագործակցության հնարավորություններ***

Ունենալով տարբեր ապրանքատեսակներ, որոնք սննդի արդյունաբերության մեջ բարձր որակով և համբավով հայտնի եվրոպական ապրանքանիշեր են, և, հանդիսանալով հեղինակավոր իտալական մրգեր արտադրող ընկերության էքսկյուզիվ ներկայացուցիչը, ռումինական ընկերությունը ծառայություններ է մատուցում ցանկացած մանրածախ առևտրով զբաղվող ընկերությանը, որը ցանկանում է լավ ապրանք տրամադրել իր հաճախորդներին: Իր պորտֆելն ընդլայնելու համար, այն փնտրում է բարձրորակ մրգեր արտադրողներ Եվրոպայից, որպեսզի ուսումնասիրի նոր հնարավորությունները և ներմուծի այդ արտադրանքը

Ծածկագիր. BRRO20160919001

## Տեքստիլ արտադրություն



## Գործարար համագործակցության առաջարկներ

### ***Տեքստիլ արդյունաբերության մեքենաների և սարքավորումների առևտրական առաջարկում է ծառայությունների համաձայնագրեր***

Թուրքական ընկերությունը, որը զբաղվում է տեքստիլ մեքենաների առևտրով, նաև սրամադրում է մեքենաների քիմիական նյութեր, մեքենաների օպտիմալացման ծառայություններ, առաջարկում է ծառայությունների համաձայնագրեր: Բացի այդ, ընկերությունը փնտրում է առևտրի միջնորդներ (ներկայացուցիչներ, գործակալներ):

Ծածկագիր. **BOTR20150210001**

### ***Արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ***

Թուրքական ընկերությունը, որն արտադրում և մատակարարում է գալարաձև վարագույրներ, շղարշանման, ասեղնագործ գործվածքներ, կտորեղեն, փնտրում է առևտրային գործակալներ և դիստրիբյուտորներ Եվրոպայում:

Ծածկագիր. **BOTR20161121002**

### ***Տեքստիլի ոլորտում գործող ընկերությունն առաջարկում է իր ծառայությունները***

Պորտուգալական ընկերությունը գործում է մեծերի և երեխաների համար նախատեսված հագուստի արտադրության ոլորտում, ինչպես օրինակ՝ վերնաշապիկներ, սվիտեր, սպորտային վերնազգեստ (толстовка), լեզգիներ, շրջազգեստներ, զգեստներ, տաբատներ, մանկական հագուստ:

Ընկերությունն աշխատում է պորտուգալական և մի քանի օտարերկրյա բրենդների հետ: Այն ցանկանում է զարգացնել իր բիզնեսը և մուտք գործել եվրոպական նոր շուկաներ արտադրական համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. **BOPT20170327001**

***Աշխատանքային հագուստ արտադրողը փնտրում է առևտրային գործակալներ արտերկրում***

Ռուսական ընկերությունը, որը մասնագիտացած է աշխատանքային հագուստի, բժշկական հագուստի, անթափանց հագուստի արտադրության ոլորտում, փնտրում է գործընկերներ արտերկրում՝ առևտրային գործակալության համաձայնագրի ներքո:

Ծածկագիր. **BORU20170127003**

***Արտադրողն առաջարկում է իր ծառայությունները, ենթապայմանագրային, աութսորսինգային կամ արտադրական համաձայնագրեր***

Իսպանական ընկերությունը, որը գտնվում է Բարսելոնայում, շուրջ 30 տարվա փորձ ունի ոչ ստանդարտ կտորեղենի արտադրության ոլորտում: Ընկերությունը ցանկանում է ընդլայնել իր բիզնեսը արտադրական, ծառայությունների մատուցման կամ ենթապայմանագրային համաձայնագրեր հաստատելով: Այն առաջարկում է կտորի արտադրության ծառայություններ՝ սկսած դիզայնից, կտորի ընտրությունից մինչև հագուստի արտադրություն:

Ծածկագիր. **BOES20151130003**

***Տղամարդու հագուստ արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ***

Թուրքական ընկերությունը, որը մասնագիտացած է տղամարդկանց հագուստի արտադրության ոլորտում և արտադրում է կոստյումներ, վերնաշապիկներ, կոշիկներ, տաբատներ և տարբեր աքսեսուարներ՝ շուրջ 500 երանգների և կտորի տեսակների, փնտրում է փորձ ունեցող դիստրիբյուտորներ համապատասխան ոլորտում:

Ծածկագիր. **BOTR20151201002**

## **Գործարար համագործակցության հարցումներ**

***Իբրև ենթակապալառու որոնվում են մարզվելու/սպորտային կոշիկ արտադրողներ***

Ռումինական ընկերությունը մասնագիտացած է բրենդային և գովազդային ապրանքների ստեղծմամբ: Այն փնտրում է այսես կոչված մարզվելու/սպորտային/բալետկա/կեդ/ քաթանե կոշիկներ/չմշկային կոշիկներ արտադրող: Այս կոշիկները պատրաստված են ռետինե կամ սինթետիկ նյութերից, վերին մասը՝ տեքստիլից: Դրանք նախագծված են կանանց, տղամարդկանց և երեխաների համար: Ընկերությունը նախատեսում է համագործակցել ենթապայմանագրային համաձայնագրերի ներքո՝ կրկնվող, փոքր պատվերներով:

Ծածկագիր. **BRRO20170216001**

### ***Ընկերությունը փնտրում է կոշիկի և հագուստի ժապավեններ արտադրող***

Երիտասարդ գերմանական ընկերությունը, որը մասնագիտացած է պրեմիում կարգի կոշիկների և հագուստի ժապավենների մատակարարմամբ, փնտրում է փորձ ունեցող եվրոպական արտադրողներ, որոնք կտրամադրեն տարբեր գույնի, երկարության, նյութի և այլ պարամետրերի ժապավեններ՝ զարգացնելու համար իրենց բիզնեսը միջազգային մակարդակով:

Ծածկագիր. **BRDE2016111001**

## **Շինարարություն**



### **Գործարար համագործակցության առաջարկներ**

#### ***Արտադրողը փնտրում է գործընկերներ***

Ռուսական ընկերությունը Մոսկվայից արտադրում է սարքավորում ոչ ավտոկլավ գազավորված բետոնի (NAC) արտադրության համար (այն իր փակ բջիջների կառուցվածքով անջրանցիկ է և սառնակայուն): Ընկերությունը նաև արտադրում է չոր բազմակողմ անցքեր ձևավորող խառնուրդ, շինանյութեր՝ բլոկներ, սալեր և պատեր, որոնք կիրառվում են բնակելի և արդյունաբերական շինարարության մեջ: Ընկերությունը փնտրում է համագործակցություն տարածման ծառայությունների, արտադրական կամ համատեղ ձեռնարկության համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. **BORU20151206001**

#### ***Ընկերությունն առաջարկում է խորհրդատվություն և ծրագրի կառավարման ծառայություններ***

Սերբական ընկերությունն առաջարկում է ուղղակի, ենթապայմանագրային կամ մեծ ծրագրերի համար խորհրդատվական և ծրագրի կառավարման ծառայություններ ջրերի և կեղտաջրերի մաքրման ոլորտում: Ընկերությունը նաև առաջարկում է հատուկ



ծառայություններ կապված ջրի կոմունալ ծառայությունների ինժեներիայի ՏՏ ոլորտի հետ: Ընկերության գործունեության մեջ ներառվում է փաստաթղթավորումը երկու քաղաքների կենտրոնական կեղտաջրերի մաքրման կայանի համար և նախնական ու վերջնական ավելի մեծ ջրային բաշխման համակարգի մասերի նախագծումը:

**Ծածկագիր. BORS20160918006**

**Ռետինատեխնիկական պարագաներ արտադրողը փնտրում է գործընկերներ**

Ռուսական ընկերությունը Ուլյանովսկի տարածաշրջանից, որը մասնագիտացած է բամբակե ամրապնդմամբ սիլիկոնե և ճյուղավորված խողովակների, ռետինե-մետաղական խրոցակների, ձևավորված ավտոմոբիլային բաղադրիչների, ռետինատեխնիկական պարագաների արտադրության ոլորտում, փնտրում է գործակալներ և դիստրիբյուտորներ ավտոմոբիլային, նավթամթերքների, շինարարության և գյուղատնտեսության ոլորտներից:

**Ծածկագիր. BORU20151003011**

***Արտադրողը փնտրում է գործընկերներ***

Ռուսական ընկերությունը Իժմսկի տարածաշրջանից, որն արտադրում է կոմպոզիտային ապակեթելքից ամրաններ, փնտրում է գործընկերներ առևտրային գործակալության, տարածման համաձայնագրերի ներքո համագործակցելու համար: Կոմպոզիտային ամրանն արտադրվում է բարձր տեխնոլոգիական սարքավորման միջոցով՝ ապակեթելքերից, որոնք ակալիների հանդեպ դիմացկուն են և նանոմոդիֆիկացված են պոլիմերային կապող նյութերով:

**Ծածկագիր. BORU20160316003**

***Հատակի ծածկույթների համար այլումինե պրոֆիլներ արտադրողը փնտրում է առևտրային գործընկերներ***

Ռուսական ընկերությունը Կրասնոյարսկի տարածաշրջանից, որը զբաղվում է հատակի ծածկույթների համար այլումինե պրոֆիլների արտադրության ոլորտում (ավելի քան 50 տարբեր կազմաձևեր, գույներ և այլումինե աստիճանների ծածկույթներ), փնտրում է գործընկերներ՝ հաստատելու համար տարածման ծառայությունների համաձայնագրեր:

**Ծածկագիր. BORU20151003006**

***Էռակցման համար էլեկտրոդներ արտադրողը փնտրում է գործակալներ և դիստրիբյուտորներ***

Ռուսական ընկերությունը, որն արտադրում է էլեկտրոդներ էլեկտրական էռակցման համար, փնտրում է դիստրիբյուտորներ և առևտրային ներկայացուցիչներ ԵՄ և այլ երկրներում: Գործընկերները կարող են լինել շինանյութերի, ներառյալ՝ էռակցման էլեկտրոդների վաճառքի և գովազդման ոլորտում գործող ընկերություններ, ինչպես նաև՝ վաճառքի գծով գործակալներ:

## Գործարար համագործակցության հարցումներ

### *Ընկերությունն առաջարկում է տարածման ծառայություններ*

Ռումինական ընկերությունը, որը մասնագիտացած է շինանյութերի և գործիքների մեծաքանակ/մանրածախ քանակով ներմուծմամբ, ցանկանում է առաջարկել տարածման իր ծառայությունները եվրոպական երկրների արտադրողներին և դիստրիբյուտորներին:

Ծածկագիր. BRRO20150706001

### *Ընկերությունը փնտրում է տարածման համաձայնագրեր*

Ռուսական ընկերությունը, որը մասնագիտացած է հասարակական և կոմերցիոն անշարժ գույքի ոլորտում, փնտրում է սովորական ծակոտկեն աղյուսի արտադրության մեջ կիրառվող սարքավորում արտադրող ընկերություն: Համագործակցությունը հնարավոր է տարածման համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. BRRU20150310001

## R&D



### *Պոլիմերային էլեկտրալույծ մեմբրաններ արտադրողը փնտրում է նմուշներ և թեստավորում H2020 առաջարկի 2-րդ փուլի համար*

Իսպանական Հանրային Համալսարանը համակարգում է H2020-ի առաջակը NMPB 2016-2017 մրցույթի ներքո, որի հապավումն է՝ FotoH2: Այն հաջողությամբ կատարել է առաջին քայլը, և կոնստրեկտորները նախապատրաստում է առաջարկի 2-րդ փուլին (վերջնաժամկետ՝

ս. թ. մայիսի 4): Բարելավելու համար առաջարկը, կոնսորցիումը ցանկանում է համագործակցել մեմբրան արտադրող ընկերության հետ՝ մշակելու համար հարմար պոլիմերային էլեկտրալոյծ մեմբրաններ: Որոնվող գործընկերը պետք է իրականացնի նամուշային արտադրանքի իրականացում:

Ծածկագիր. RDES20170331002

***INTERREG Europe Third Call. Որոնվում են գործընկերներ կանխարգելիչ առողջապահության և թերմալիզմ (thermalism) ոլորտում***

Ֆրանսիական 11 շերմային ՄՊԱ-ների ասոցիացիան նախապատրաստում է INTERREG Europe 1.2 ծրագիրը առողջապահության, բժշկական թերմալիզմի և կանխարգելիչ առողջապահության ոլորտների թեմաների ներքո: Ծրագրի նպատակն է առավել դյուրին դարձնել տարածաշրջանային կառավարող մարմինների, համալսարանների և գործընկերների միջև լավ փորձի փոխանակումը՝ մշակելու համար գիտելիքների փոխանցման նորարարություն մեթոդը: Որոնվում են գիտահետազոտական ինստիտուտներ, համալսարաններ, հասարակական կազմակերպություններ, կլաստերներ և կառավարող մարմիններ, որոնք գործում են կանխարգելիչ առողջապահության և թերմալիզմի ոլորտում:

Ծածկագիր. RDFR20170403001

***H2020- ICT-11-2017. Քաղաքային հատկացումների համար որոնվում են գործընկերներ (համալսարաններ, ասոցիացիաներ, հետազոտական ինստիտուտներ, տեղական/տարածաշրջանային կառավարող մարմիններ, ՓՄՁ-ներ)***

Իսպանական ՓՄՁ-ն, որը մասնագիտացած է ՏՏ ծրագրերի մշակման ոլորտում, պատրաստում է ծրագրային առաջարկ H2020- ICT-11-2017 մրցույթի ներքո: Ծրագիրը կմշակի նորարարական ՏՏ գործիքներ խթանելու համար մարդկանց ներգրավվածությունը, տեղեկատվությունը կիսելու և մասնակցության փորձի ստեղծման համար, որն ուղղված է տեղական քաղաքային հատկացումների զարգացմանը: Կոնսորցիումը փնտրում է համալսարաններ, ասոցիացիաներ, հետազոտական ինստիտուտներ, տեղական/տարածաշրջանային կառավարող մարմիններ, որոնք փորձ ունեն քաղաքային հատկացումների ոլորտում, նաև՝ ՓՄՁ-ներ, որոնք փորձ ունեն Վեբ մշակման և սոցիալական ցանցերի ոլորտում:

## Տեղեկատվական տեխնոլոգիաներ



### Գործարար համագործակցության առաջարկներ

#### *Վիրտուալ իրականության համար վիդեոխաղեր մշակողը փնտրում է ծառայությունների համաձայնագրեր*

Իսպանական ընկերությունն առաջարկում է հարմարեցված տեխնոլոգիական լուծումներ՝ օգտագործելով վերջին ձեռքբերումներն այդ ոլորտում: Այն փնտրում է ծառայությունների համաձայնագրեր խաղեր մշակող ընկերությունների հետ:

Ծածկագիր. BOES20161209004

#### *Ընկերությունը փնտրում է գործընկերներ S2S ոլորտից*

Ընկերությունը մասնագիտացած է տարբեր ծառայությունների ոլորտում, ինչպես օրինակ՝ ծրագրերի մշակում, կայքերի պատվերով մշակում, բջջային և էկրանների, տվյալների բազայի զարգացման, ինտեգրման և GIS ծառայություններ, տեխնիկական աջակցություն, SS ծառայություններ և այլն: Ընկերությունը փնտրում է ենթապայմանագրային և աութօրսինգային ծառայություններ:

Ծածկագիր. BOAL20160707003

#### *Որոնվում են գործընկերներ*

Ռումինական ընկերությունն առաջարկում է մասնագիտացված տեխնիկական աուդիտի ծառայություններ IT&C ոլորտում: Հիմնված լինելով ծառայությունների համաձայնագրերի վրա, աուդիտն արվում է տարբեր հատուկ կանոններով՝ լավ փորձ ունեցող մասնագետների կողմից: Գործընկերը կարող է լինել ցանկացած երկրից SS ընկերություն կամ SS ծրագրերում մասնակցող ընկերություն:

Ծածկագիր. BORO20160323002

## Գործարար համագործակցության հարցումներ

### *Ընկերությունը փնտրում է գործընկերներ Բանացանցի ոլորտից*

Մինգապուրյան ընկերությունը փնտրում է ծրագրային ապահովման նախագծման հնարավորություններով գործընկեր Եվրոպայում Բանացանցի ոլորտից, նաև՝ տեխնիկական հնարավորություններով վերջնական կիրառողներ, ովքեր հետաքրքրված են Բանացանցի, bluetooth & WiFi տեխնոլոգիաներով: Մինգապուրյան ընկերությունն առաջատարներից է IC մատակարարների ոլորտում և փնտրում է Բանացանցի գործընկերներ/Օրիգինալ սարքավորումներ արտադրողներ(OEMs), որոնք ունեն նախագծման հնարավորություններ, ինչպես նաև՝ կենցաղային տեխնիկայի և սպիտակ բրենդի ապրանքանիշի ընկերությունների հետ:

Ծածկագիր. BRS20170216001

## Կոսմետիկա



## Գործարար համագործակցության առաջարկներ

### *Բնական կոսմետիկա արտադրողը փնտրում է առևտրի միջնորդներ*

Լիտվական ընկերությունը, որը մասնագիտացած է թարմ և բնական կոսմետիկայի արտադրության ոլորտում, փնտրում է առևտրի միջնորդներ (գործակալներ, դիստրիբյուտորներ, ներկայացուցիչներ) տարածման կամ առևտրային ծառայությունների ներքո համագործակցելու նպատակով:

Ծածկագիր. BOLT20170324001

### *Պրեմիում դասի բնական կոսմետիկա տարածման համար*

Խորվաթական ընկերությունը, որը մասնագիտացած է պրեմիում դասի բնական կոսմետիկայի

արտադրության ոլորտում՝ արված բարձրորակ բուսական յուղերից, կարագից, մեղրամոմից և էքստրակտներից, փնտրում է դիստրիբյուտորներ, ովքեր կցանկանան ներկայացնել արտադրանքն իրենց շուկաներում:

Ծածկագիր. BOHR20160720001

### *Որոնվում են նոր դիստրիբյուտորներ*

Իսրայելյան ընկերությունը, որը մշակում, արտադրում և արտահանում է լյուքս դասի մարմնի, մազերի խնամքի ապրանքներ՝ պատրաստված Մեռյալ ծովի հանքանյութերից, փնտրում է պոտենցիալ գործընկերներ ողջ աշխարհում՝ տարածման ծառայությունների ներքո համագործակցելու նպատակով :

Ծածկագիր. BOIL20161222001

## Դեղագործություն



### Գործարար համագործակցության առաջարկներ

*Հիվանդանոցների համար արքեստուարներ և բաղադրիչ մասեր արտադրող ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ*

Բժշկական ինժեներական ապրանքների առաջատար մատակարարը, որն առավել շատ կենտրոնացած է CSSD-ի (Ստերիլ ծառայությունների կենտրոնական բաժին) արքեստուարների և բաղադրիչների ոլորտում, փնտրում է դիստրիբյուտոր գործընկերներ Եվրոպայում:

Ծածկագիր. BODE20160316001

## **Բժշկական և վերականգնողական սարքավորումներ արտադրողը փնտրում է գործընկերներ**

Լեհական ընկերությունը, որն արտադրում է բժշկական և վերականգնողական սարքավորումներ, այժմ փնտրում է գործակալներ և դիստրիբյուտորներ: Բացի վաճառքից, ընկերությունը նաև առաջարկում է ենթապայմանագրային/աութսորսինգային գործունեություն՝ տարբեր տիպի մեխանիկական և էլեկտրական բժշկական սարքավորումների արտադրության հետ կապված:

Ծածկագիր. BOPL20150916002

### ***Որոնվում են գործընկերներ ծառայությունների համաձայնագրերի ներքո***

Իսպանական կենսատեխնոլոգիական լաբորատորիան, որը մասնագիտացած է առաջադեմ նուկլեինաթթուների տեխնոլոգիաների ոլորտում, առաջարկում է փորձ և սարքավորումներ տարբեր գենոմային ուսումնասիրությունների բոլոր փուլերի համար՝ փորձարարական նախագծումից մինչև տվյալների վերլուծություն: Ընկերությունը փնտրում է գործընկերներ, ովքեր հետաքրքրված են ծառայությունների համաձայնագրերով:

Ծածկագիր. BOES20160203002

## **Գործարար համագործակցության հարցումներ**

### ***Ընկերությունն առաջարկում է տարածման ծառայություններ դեղագործական ընկերություններին***

Դիստրիբյուտորը Վրաստանից առաջարկում է տարածման ծառայություններ դեղագործական ընկերություններին վրացական շուկայում:

Ծածկագիր. BRGE20170208001

## **Այլ ոլորտներ**



## Գործարար համագործակցության առաջարկներ

### ***ՓՄՁ-ն փնտրում է տարածման գործընկերներ գինեգործական խմորման վերահսկման համակարգի համար***

Գերմանական ՓՄՁ-ն, որը գործում է գինեգործության ոլորտում կիրառվող չափման սարքավորումների արտադրության ոլորտում, մշակել է գնային առումով հարմարավետ խմորման վերահսկման համակարգ, որը կարող է կիրառվել բոլոր տեսակի գինիների և ամեն չափի խմորման ծավալների դեպքում: Համակարգն իր մեջ ներառում է ձեռքի թվային ռեֆրակտոմետր, թերմոստատ, պլանշետ/նոթբուք և windows-ծրագիր: Այն շատ հեշտ է բռնելու համար: ՓՄՁ-ն փնտրում է դիստրիբյուտոր գործընկերներ, ովքեր կներկայացնեն համակարգը իրենց տեղական շուկաներում:

**Ծածկագիր. BODE20170313001**

### ***Խառնող արքավորում արտադրողը փնտրում է առևտրային գործընկերներ***

Իտալական ընկերությունը, որն արտադրում է խառնող սարքավորում՝ դեղագործական, սննդի, սննդային հավելումների, կոսմետիկայի ոլորտների համար, փնտրում է դիստրիբյուտորներ: Ընկերությունը կարող է նաև հանդես գալ իբրև մասնագիտացված ենթակապալառու մեծ ընկերությունների համար և այժմ փնտրում է երկարատև միջազգային համագործակցություն տարածման կամ ենթակապալմանագրային համաձայնագրերի ներքո:

**Ծածկագիր. BOIT20160316003**

### ***Խանութների համար դարակների դասավորման համակարգ***

Չեխական դիզայնի և ինժեներական ընկերությունն արտադրում է արդյունաբերական, ինտերիերի դիզայնի ապրանքներ և խանութների դարակների դասավորման համակարգեր: Այն փնտրում է դիստրիբյուտորներ/ներկայացուցիչներ և առաջարկում է իր անվճար ազատ արտադրական ծավալները:

**Ծածկագիր. BOCZ20160106001**

### ***Որոնվում են կահույքագործական ապրանքների դիստրիբյուտորներ***

Հունգարական ընկերությունը գործում է կահույքի մշակման և արտադրության ոլորտում (գրասենյակների, հիվանդանոցների, դպրոցների, հանրակացարանների, բուհերի, հյուրանոցների, բանտերի, տան համար կահույք): Ընկերությունն փնտրում է տարածման



գործընկերներ իրենց արտադրանքի համար հատկապես Եվրոպայում:

Շածկագիր. BOHU20150907001

## Գործարար համագործակցության հարցումներ

### *Ընկերությունը փնտրում է առաջադեմ գյուղատնտեսական արտադրանք*

Չինական ընկերությունը փնտրում է բարձրորակ գյուղատնտեսական քիմիկատներ/պարարտանյութեր Եվրոպայից: Ընկերությունը ցանկանում է ներմուծել այդ ապրանքները և տարածել դրանք Չինաստանում:

Շածկագիր. BRCN20170209001

### *Ընկերությունը փնտրում է բիոպլաստիկների մատակարարներ վայրի միջավայրերի և ապրանքների համար*

Միացյալ Թագավորության հարավարևմտյան տարածաշրջանում գտնվող ընկերությունը, որն առաջատարներից է Եվրոպայում վայրի միջավայրերի, սնուցման և բնության համար նախատեսված այլ պարագաների նախագծման, արտադրության և մատակարարման ոլորտում, ունի մեծ նվիրվածություն բնապահպանությանը: Իր արտադրանքի համար ընկերությունը փնտրում է օգտագործված բիոպլաստիկներ փայտի փոխարեն: Այն փնտրում է գործընկերներ մատակարարման/արտադրական համաձայնագրերի ներքո:

Շածկագիր. BRUK20160408001

### *Ընկերությունը փնտրում է սոսնձվող ծրարներ*

Դանիացի դիզայները մշակում է սոսնձվող ծրարներ, որոնք կարող են կիրառվել հորատիչի օգտագործման ժամանակ փռչին հավաքելու նպատակով: Ընկերությունն արտադրական համաձայնագրերի ներքո փնտրում է գործընկեր, ով կպատրաստի այդ ծրարները, կպահովի տպագրությունը և կկիրառի համապատասխան սոսինձը:


Շածկագիր. BRDK20170330001

### *Ընկերությունը փնտրում է սարքավորումների և նյութերի մատակարարներ ավտոտերվիսի համար*

Ռուսական ընկերությունը Սմոլենսկի տարածաշրջանից փնտրում է ավտոտնակների, մեքենայի վերանորոգման, ներկ փչող և կոմպրեսոր սարքավորումներ, ինչպես նաև լաքեր, շարժիչային յուղերի մատակարարներ Ռուսաստանի Ֆեդերացիայից՝ տարածման ծառայությունների ներքո համագործակցելու նպատակով:



# Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ



## Տեխնոլոգիական համագործակցության առաջարկներ

### *Ընկերությունն առաջարկում է կենսաբանորեն քայքայվող, ուտելի և տպագրությանը պիտանի օրգանական պլաստիկ՝ արված կովի կաթի պրոտեինից*

Ֆրանսիական ՓՄՁ-ն մշակել է օրգանական ջերմապլաստիկ հատիկներ՝ ստացված կովի կաթի պրոտեինից և ունի մի շարք հատկություններ՝ լուծելիություն ջրում, ուտելի է և կենսաբանորեն քայքայվող է: Այն ունի արդյունաբերական տարբեր կիրառումներ (լվացող միջոցներ, ագրոքիմիկատներ, սննդամթերք, կոսմետիկա, բժշկություն և այլն): Ընկերությունը փնտրում է գործընկերներ արդյունաբերական ոլորտներից, որոնք ցանկանում են կիրառել տեխնոլոգիան իրենց արդյունաբերական գործընթացներում: Համագործակցությունը հնարավոր է տեխնիկական կամ հետազոտական համագործակցության համաձայնագրերի միջոցով:

Ref : TOFR20161223001

### *Նորարարական հարթակ ձեռնարկությունների բլոկչեյնի համար*

Մինգապուրյան սկսնակ ընկերությունը, որը մասնագիտացած է բլոկչեյնի վրա հիմնված կոմպլեքս լուծումներում, որոնք ներառում են կոմպլեմենտար տեխնոլոգիաներ և բլոկչեյն փորձաքննություն, առաջարկում է պատրաստի բլոկչեյնի նախատիպային հարթակ, ինչը կօգնի ձեռնարկություններին արագորեն նախագծել, տեղակայել և կիրառել բաշխված գրանցամատյանները: Ընկերությունը պատրաստ է համագործակցել առևտրային, տեխնիկական և ծառայությունների համաձայնագրերի ներքո հետաքրքրված գործընկերների հետ (բազմաֆունկցիոնալ ձեռնարկության կամ ՓՄՁ-ի հետ)՝ կիրառելով այդ հարթակը

## Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ

### *Որոնվում են հնարավորություններ ջերմամշակման միջոցով կոմպոզիտային նյութից ծածկույթը կերամիկական թիթեղների վրա կիրառելու համար*

ՓՄՁ-ն Միացյալ Թագավորությունից, որը մասնագիտացած է արդյունաբերական նյութերի և կերամիկայի ոլորտում, փնտրում է գործընկեր, ով կարող է կիրառել գերբարձր մոլեկուլային քաշի պոլիէթիլենային (UHMWPE) օպտիկամանրաթելային կոմպոզիտային նյութ կամ համարժեք մի նյութ, որի օգնությամբ կերամիկական ավազները ջերմամշակում կանցնեն և կպաշտպանեն մարմինը տաքությունից: Ընկերությունը փնտրում է արտադրական կամ տեխնիկական համագործակցության համաձայնագրեր:

Ref : TRUK20170317001

### *Որոնվում է գործընկեր մշակելու համար ջրային տրանսպորտի ջրանցքի ֆոտոէլեկտրական վահանակների կրող կառուցվածք*

Ֆրանսիական ընկերությունն իր գործընկերների հետ մշակել է ջրային սառեցմամբ ֆոտոէլեկտրական գործարան՝ տեղակայված ջրային տրանսպորտի ջրանցքի վրա: Արդյունաբերական լաբորանտի շնորհիվ, ընկերությունը նպատակ ունի մշակել նոր լուծումներ աջակցելու այդ արևային վահանակներին: Ընկերությունը փնտրում է գործընկեր, ով կառաջարկի տեխնիկական լուծումներ՝ աջակցելու այդ վահանակների մշակմանը: Այն բաց է տեխնիկական համագործակցության համաձայնագրերի համար:

Ref : TRFR20170308001

# Եվրոպական նորություններ և միջոցառումներ

Ձեռնարկությունների եվրոպական ցանցի շրջանակներում կազակերպվում են բազմաթիվ միջոցառումներ, որոնք հնարավորություն են ընձեռում գործարարներին հանդիպելու հավանական գործընկերների հետ և ստանալու անհրաժեշտ տեղեկություններ՝ եվրոպական շուկա մուտք գործելու համար:

Ստորև ներկայացվում են 2017 թ. -ի մայիս, հունիս ամիսների ընթացքում կազմակերպվող միջոցառումները:

## Մայիս

09/05/2017	<p><b>EEN Brokerage Event at ICT Spring 2017</b>  <b>Luxembourg (Luxembourg)</b></p> <p>Համագործակցության հաստատման այս միջոցառումը Ձեր ընկերությանն առաջարկում է հետևյալը՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• երկօրյա բիզնես հանդիպումներ</li> <li>• հնարավորություն ստեղծելու ամուր համագործակցություն S2S ոլորտում</li> <li>• ցանցային լայն հնարավորություններ թվային ոլորտի առաջատարների, նորարարության ոլորտի մենեջերների, հետազոտողների, սկսնակների և այլոց համար</li> <li>• հնարավորություն գտնելու ճիշտ բիզնես գործընկերներ մեկ վայրում:</li> </ul>
09/05/2017	<p><b>Murcia FOOD Brokerage Event 2017</b>  <b>Murcia (Spain)</b></p> <p>Murcia Food 2017 համագործակցության հաստատման միջոցառման ընթացքում կներկայացվեն սննդի տեխնոլոգիայի ոլորտում եվրոպական ընկերությունների կողմից առաջարկվող վերջին նորությունները: Մա լավ հնարավորություն է՝ ուղղված տեխնոլոգիական համագործակցության հաստատմանն ու հետազոտական առաջարկներին:</p>
16/05/2017	<p><b>Brokerage Event at Eureka Innovation Week 2017</b>  <b>Barcelona (Spain)</b></p> <p>B2B հանդիպումներ տեխնոլոգիային առնչվող տարբեր ոլորտներում՝ նորարարական ծրագրերում համագործակցելու համար: EUREKA Innovation Week 2017-ն ակնկալում է հյուրընկալել բիզնեսի ոլորտում գործունեություն</p>

	<p>ծավալած ընկերությունների աշխարհի մի շարք վայրերից, որոնք ներկայացնում են հետևյալ ոլորտները՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1. S2S</li> <li>2. Նոր նյութեր</li> <li>3. Էներգիա</li> <li>4. Սմարթ քաղաքներ</li> <li>5. Տրանսպորտ</li> <li>6. Բնական գիտություններ:</li> </ol>
--	--

**Հունիս**

16/05/2017	<p><b>International matchmaking event “Business. Golf. Jazz. 2017” Klaipeda (Lithuania)</b></p> <p>Եւրոպայի միջոցառման ընթացքում մասնակիցները ոչ միայն կկարողանան մասնակցել կոնֆերանսին, B2B հանդիպումներին, բայց նաև կարող են խաղալ գոլֆ և լսել ջազ:</p>
------------	---

Վերոհիշյալ միջոցառումների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար խնդրում ենք դիմել ՁԵՑ Հայաստան:

**Նշում:** *Եթե Դուք փնտրում եք գործընկեր արտասահմանում կամ նոր շուկա՝ և ցանկություն ունեք ներգրավվել ցանցի տվյալների բազայում, խնդրում ենք դիմել ՁԵՑ Հայաստան՝ համագործակցության հայտաձևեր և այլ համապատասխան տեղեկատվություն ստանալու համար:*

Հարգելի գործարար,

Գրանցվեք հետևյալ հղմամբ՝

<http://een.ec.europa.eu/tools/services/ExpressionOfInterest/Customer/Create?shid=32db25cb-726f-43b0-8b5f-7742d0935799> և ստացեք անվճար

*հաղորդագրություններ Ձեր էլեկտրոնային փոստին նոր գրանցված բիզնես առաջարկների, միջազգային միջոցառումների վերաբերյալ:*

*Մատուցվող բոլոր ծառայություններն ու տեղեկատվությունն անվճար են:*